

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**36**

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**36**

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**36**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-  
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան  
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,  
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

**ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ՇՆՈՐՀԱԼԻ»  
ՊԱՏՎԱԾՆՎԱԾ ՄԱՍԻՆ**

*Բանալի բառեր՝ Պատվանուն, կաթողիկոս, «Շնորհալի», Սև Լեռան վանքեր, Ստեփանոս Մանուկ, Պողոս առաքյալ, «Աստուծոյ բերան»:*

Ներկայացվող նյութը վերաբերում է պատվանուններին, մասնավորապես՝ «Շնորհալի» մականվանը: Հարցին և, մասնավորապես, «Շնորհալի» պատվանվանը մանրամասն անդրադարձել է հայր Ղեւոնդ Ալիշանը<sup>1</sup> առաջ քաշելով համոզիչ եզրակացություններ ու գեղեցիկ օրինակներ հայ մատենագրությունից: Թվում է՝ ի՞նչ կարելի է ասել ավելին: Սակայն, համաձայնելով նրա համապարփակ տեղեկությունների և եզրահանգումների հետ, այնուամենայնիվ կարող ենք ներկայացնել ցայժմ չնկատված նրբություններ և գուցե նորություններ:

Հայկական աղբյուրներում պատվանունները բազմաթիվ են, սկսած ամենավաղ ժամանակներից, և գործածվում են ցայսօր: Դրանց տեսակները, ծագման հանգամանքներն ու նպատակները տարբեր են: Դրանք կարող են սահմանել անձի տիրոջ, շքանունը, հոգևոր աստիճանը, օրինակ՝ իշխան, կոմս, սպարապետ, գերապատիվ, արժանապատիվ. մարդու գործունեությունը՝ «Մեծ»<sup>2</sup>, «Լուսավորիչ», «Իմաստասեր», «Գիտնական», «Փրկիստիա», «Թարգմանիչ», «Շինող». հատկանիշները՝ Արա Գեղեցիկ և Տորք Անգեղ, «Քարավեժ», «Շղթալակիր», «Երկաթ» (Աշոտ Բ), «Մանուկ», նախասիրությունները՝ «Մսակեր» (Աշոտ), «Ոսպնակեր» և անգամ ֆիզիկական առանձնահատկությունները՝ «Կոտակ» (Խոսրովը՝ փոքրամարմին լինելու պատճառով), «Կաղ» (Գէորգ, Թեմուր), «Կամսար» (պակասագլուխ), «Մեղրիկ» (Գէորգ), «Գոշ» և այլն:

Հանդիպում են նաև մականուններ, որոնց իմաստը բացասական է թվում՝ «Թուրք» Վարդան, «Գող» Վասիլ, «Գայլ» Վահան: Դրանք հաճախ այս կամ այն հայ գործչին օտարներն են տվել, սակայն, որպես կանոն, հայրենակիցների կող-

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ. գ. դ., erna.shirine@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ նոյեմբերի 20, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ նոյեմբերի 26, 2023:

<sup>1</sup> Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան Վ. Մխիթարեան. *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, էջ 3-7:

<sup>2</sup> Այս պատվանունն ամենատարածվածն է բոլոր ազգերի մոտ:

մից դրական իմաստով են ընկալվել և շարունակվել են գործածվել: Իսկ ազգանունները, որոնք հիմնականում կազմվում են ցեղի առաջնորդի՝ հայրանունից, տեղանունից, մասնագիտություն կամ կարգավիճակի ու մականունների հիման վրա՝ հաճախ ևս սերում են վերջիններից: Երբեմն պատվանուններն ավելի նկարագրական բնույթ ունեն և չեն սահմանափակվում միայն մեկ բնորոշիչով: Օրինակ՝ Սյունյաց դպրոցը ներկայացնող Սողոմոն Գառնեցին կամ Մաքենացին բնութագրվում է որպես «Հարանց հայր», «Սիւն երկնի», «Խարիսխ հաւատոյ», «աստուածագգեաց և սերովբէատիպ»<sup>3</sup>:

Պատվանունների ցանկը կարելի է շարունակել, սակայն մեզ հետաքրքրում է «Շնորհալի»-ն: Այն վերաբերում է այն անուններին, որոնք թերևս կոչման կամ որոշակի դպրոցի ցուցիչ են՝ «Թարգմանիչ», «Վերծանող»<sup>4</sup>, «Իմաստասեր», «Քերթող», «Բաբունի», «Բանասեր», «Վկայասեր», «Վանական»: «Շնորհալի» պատվանունը կրել են տաղանդավոր Ստեփանոս Մանուկի սաները՝ համբավավոր վարդապետներ Ներսես Շնորհալին, Սարգիս Շնորհալին, Գրիգոր Գ Պահլավունին, Իգնատիոս Սևրեռնցին: Մաղաքիա արք. Օրմանյանը (917.) Ստեփանոս Մանուկին նվիրված գլխում գրում է.

Յիշեալ վանբը (Քեսունի կամ Շուրի Կարմիր վանբը – է.Մ.Շ.) մեծ զարգացում ունեցաւ Ստեփանոսի ձեռքին ներքեւ, եւ աւելի եւս հոշակուեցաւ իր աշակերտութենէն ելած նշանաւոր անձերով, որոնց գլուխը պէտք է արձանագրուին Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը եւ իր եղբայրը Ներսէս Շնորհալին: Այս երկուքին ընկերակիցներն են Իգնատիոս Շնորհալի, Սարգիս Շնորհալի, Բարսեղ Շնորհալի, եւ ուրիշներ ալ: Շնորհալի մականունին կրկնումը նշա-

<sup>3</sup> Զարմանալի է, որ բացառիկ իր արժանիքներով, շատ ուրտներում աչի ընկնող և մեծ նպաստ ներդրած այս անձը, թեև մեծարվել է բազում այլ պատվանուններով, հետագայում կարծես թե մոռացության է մատնվել: Այսօր էլ Սողոմոն Մաքենացին շատ քիչ է հիշատակվում. գրեթե ուսումնասիրված չէ նրա գործունեությունը (հիշտ է, նրա ժառանգությունից ոչինչ չի պահպանվել, և կան միայն ժամանակակիցների և հետագա հեղինակների ռեզյումեները):

<sup>4</sup> «Վերծանող»-ի վերաբերյալ Մ. արք. Օրմանյանը սպառիչ բացատրություն է տալիս. «Սուրբ Գիրքը հասկնալու փափառողները, կ'ըսէ, բազում թոշակօք եւ հետագնաց հանապարհօք եւ բազմաժամանակեայ դեգերմամբ պարտաւոր էին ասորի դպրոցներ երթալ: Եկեղեցւոյ պաշտամունք եւ կարգացմունք ալ ասորի ուսմամբ կ'ըլլային (ՓԱԲ. 13), վասնզի Պարսիկներ իրենց բաժնին մէջ յունարէնի ուսումն ալ արգելած էին, եւ միայն ասորին կը ներէին, քիստոնէական պաշտամանց համար (ՍՈՓ. ԺԱ. 13), ուսում մը, յորմէ ոչինչ էին կարող լսել եւ օգտիլ ժողովուրդին, եւ եկեղեցւոյ պաշտօնեաներ մեծ աշխատութեան կը պարտաւորուէին քարգմանութեանց համար: Այդ նպատակով երկու նոր դասակարգեր կազմուած էին եկեղեցական պաշտամանց համար, Վերծանող՝ որ օտար լեզուով գիրբերը կարդալու վարժութիւն ունեցողներ էլ կազմուէր, եւ Թարգմանիչ՝ որ օտար լեզուով գիրբերը բերանացի եւ առետեղ ժողովուրդին կը քարգմանէին»: Մ. արք. Օրմանյան, *Ազգապատում*, հտ. Ա, Կ.Պոլիս, 1911, էջ 128 (այսուհետ՝ *Ազգապատում*):

նաուրագոյն աշակերտներուն վրայ, մտածել կու տայ թէ այդ կոչումը որոշիչ պատուանուն մը եղած է Շուրի կամ Քէսունի Կարմիր վանքի աշակերտութեան մէջ, ինչպէս Քերթող պատուանունը Սիւնեաց դպրոցին (398), եւ Իմաստասէր պատուանունը Արագածոտնի դպրոցին (979) յատկացեալ մակդիր անունի պէս գործածուեցան<sup>5</sup>:

*Հարց է առաջանում. «Ինչո՞ւ հենց Շնորհալի»: Պարզ է, որ այն կապված է Աստոծո պարգևած տուրքի հետ, որին արժանանում են ընտրյալները: Հայտնի է, որ շնորհը բազմադիմի է և դա լավագույնս բացատրում է հ. Ալիշանը՝ մանրամասն քննարկելով դրա բոլոր նշանակութուններն ու արտահայտումները.*

Բայց ի՞նչ են Շնորհի՞ որով լի համարուի մերս Ներսէս. եւ ոսկի՞ց, եւ ե՞րբ նախ այդպէս անուաներ է: — Ըստ սովորական նշանակութեան՝ շնորհի կ'իմանամք տուրք մը, եւ ի մասնաւորի՝ երկնապարզել տուրք մ'առ բանականս, զարդարիչ եւ զարգացուցիչ մտաց եւ հոգոյ. եւ ալ աւելի յատուկ փրստոնէական մտօ՞ւ աստուածային ձիրք եւ զօրութիւն մը, որով մարդ կրնայ հանդիմանալ Աստուծոյ, անոր օգնականութեամբը եւ յայտնեալ կրօնից խորհրդով: Նաեւ մարդկան արտաքին եւ կենսական առաւելութիւնն ալ շնորհի կ'ըսուին. ինչպէս, փաշտոյնութիւն, ոյժ, նարտարութիւն, շարժումով, եւ այլն, եւ մանաւանդ բարեկազմութիւն մարմնոյն կամ իրերապատշաճութիւն մասանց, որ է եւ գեղեցկութիւն: Սակայն գեղեցկութեան իսկ կատարելութիւնն է շնորհի. քանզի կրնայ ըլլալ արտաքին ձեւով եւ չափով գեղեցիկ մը, այլ ներքին վայելուչ յատկութիւններէ զուրկ՝ անշնորհի մնայ, եւ գեղեցկութիւնն իսկ ոչ ցուցիչ եւ հանգուցիչ. ընդհակառակն նուազագոյն գեղեցկութիւն մ'ալ կրնայ սրտագրաւ շնորհի ունենալ. վասն զի շնորհին ալ մարդուս ներքին եւ էական բնութեան (հոգոյն) զօրութեանց յարմարակցութիւնն է. որ եթէ եւ ընդ արտաքինոյն միանայ՝ կատարել գեղեցիկ եւ շնորհալի կրնէ զանձը<sup>6</sup>:

*Այնուամենայնիւ, դրանց մեջ բացակայում են շնորհի մի քանի այլ՝ ոչ պակաս կարևոր իմաստներ ու արժեւորումներ. վերջապէս «Շնորհալի» բառը՝ «Շնորհներով լի», մի քանի շնորհ է ենթադրում: Սպասելի էր, որ այս ցանկում*

<sup>5</sup> Ազգապատում, հտ. Ա, էջ 690: Հմմտ. նաև. «Բայց Կլայեցիէ աւելի գործածական է Շնորհալի մակդիր անունը, թէպէտ այս ալ բացառաբար յատուկ չէ Ներսէսի, որ միայն ու միայն իրեն սեփականուած անուն մը կարծուի: Կարմիր վանքի աշակերտներէն եւ Ներսէսի աշակերտակիցներէն Իգնատիոս եւ Սարգիս եւ Քարսեղ վարդապետներն ալ այդ մականունով կոչուած են, եւ իրաւունք ունինք կարծել, թէ Ստեփանոս Մանուկի աշակերտական խումբին ընդհանուր կերպով արուած կոչում մը եղած է (917), բայց այսօր Շնորհալի անունը առանց ուրիշ յատկութեան, նոյն խումբին նշանաւորագոյն անհատին, Մովսէցի կամ Պահլաւունի կամ Կլայեցի Ներսէս Դ կաթողիկոսին՝ իբր առանձնապատուկ կոչում ընդունուած է», նոյն տեղում, էջ 725:

<sup>6</sup> Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 4:



ներգրավվեր նաև ճարտասանությունը, հոետորությունը, որը ոչ պակաս շնորհ է: Երկրորդ՝ որոշ օրինակներից կարելի են թաղրել, որ «շնորհ» եզրը կապված է «բերան» բառի հետ, որն իր հերթին հաճախ տեխնիկական տերմինի իմաստ է ձեռք բերում: Եւ երրորդ՝ «շնորհ» իմաստային սերտ կապ ունի «պատիվ» բառի հետ, ինչը փաստում են բազմաթիվ միջնադարյան հեղինակներ<sup>7</sup>:

Կանգ կառնենք միայն առաջին երկու իմաստի վրա, որոնք նաև սերտորեն առնչվում են միմյանց: Կրանց քննության համար ուշագրավ են Գրիգոր Աբասյանի «Գիրք պատճառաց» ժողովածուի ընձեռած օրինակները: Գրիգոր Նյուսացու երկերից ընտրված և այսպես կոչված «նուրբ գրեանց» բաժնում ընդգրկված ճառերից մեկն այստեղ ներկայացված է «Պատճառ ճառին, որ ի Մելիտէս Անտիոքացի ի Գրիգորէ նիւսացույ [Աստուածաբանէ]»<sup>8</sup> (= *Oratio funebris in magnum Meletium episcopum Antiochiae*) վերնագրի ներքո: Քառակուսի փակագծերում զետեղված «Աստուածաբան» բառը՝ գրված է այլ ձեռքով, սև թանաքով ջնջած «Նիւսացույ»-ի վերևում: Նման ուղղումները կամ ընդմիջարկումները հաճախակի հանդիպող երևույթներ են այս ձեռագրում և, որպես կանոն, արված են ինչպես Կեչառեցու կողմից: Նա որոշ ժամանակ տնօրինել է այս ձեռագիրը, կարելի ասել, գրքի խմբագիրն է եղել և, գուցե ձեռքի տակ ունենալով երկի մեկ այլ օրինակ, բազում ճշգրտումներ է արել (օրինակ՝ կիսախորանի մեջ զետեղված գրքի վերնագիրը), ուղղումներ, որոնք ոչ միշտ են արդարացված: Փաստորեն, հենց այս դեպքում առկա ճիշտ համարվող «Նիւսացույ» ընթերցումը ինչպես Կեչառեցին ամենուրեք ուղղել է «Աստուածաբանէ»-ի: Այս «պատճառի» հեղինակը (թերևս սույն ժողովածուն կազմող Գրիգոր Աբասյանը, որը ևս, բարդ հարցեր քննարկելիս, հաճախ բացատրություններ է ներմուծում) տեղյակ է այս շփոթությունը և գլխի սկզբում քննարկում է այն.

Ճառս այս ոչ է ասացեալ Աստուածաբանի, այլ Նիւսացի Գրիգորոյ եւ յայտ ի նկարագրութենէ բանիցն է, սակայն վասն կատարեալ սիրոյն առ միմեանս եւ աննախանձ բարուցն, եղաւ յայս գիրս, զոր արինակ եղեալ է յԱռորս գիրքն այն նառ, որ ասէին, թէ. «Հայր մեծ է, քան զՈրդի»՝ նոյն Գրիգորի ասացեալ<sup>9</sup>:

<sup>7</sup> Օրինակ՝ **Գրիգոր Տաբեացի**, *Մեկնութիւն Սաղմոսաց*, աշխ. Ա. Քոչկերյանի, Երևան 1993, էջ 13 կամ Առաքել Սիւնեցի, *Լուծմունք Սահմանացն Դավթի, Մաղրաս, 1797*, էջ 169. անձին վերաբերող կարևոր հարցադրումներից են՝ «ո՞րպիսի շնորհս ընկալաւ» եւ «ո՞րպիսի պատիս ունէր»: Այդ հարցին անդրադարձել ենք Հր. Բարթիկյանին նվիրված մի հոդվածում՝ «Պատիվ և հարգանք» վերնագրի ներքո, թեև հիմա կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ այն անվանել «Պատիվ և շնորհ», քանի որ «շնորհ» եզրին է համապատասխանում հունարեն χάρις-ը, առաջնային իմաստով՝ հենց «շնորհն», տե՛ս Մ. Է. Շիրինյան, «Պատիվ և հարգանք (Τιμή τε καὶ χάρις)», *Տարեգիրք* Բ, ԵՊՀ, Աստվածաբանության ֆ-տ, Երևան, 2007, էջ 46-57:

<sup>8</sup> ՄՄ 1879, 202բ:

<sup>9</sup> ՄՄ 1879, 202բ-203ա:

Այստեղ լուսանցքում առկա է խմբագրի միջամտությունը, որը անունների փոփոխություններ չի սահմանափակվում, այլ իր ուղղումն արդարացնող վկայություն է բերում. «ստոյգն այս է, որ Աստուածաբանն է ասացեալ զճառս, զոր եւ Սոկրատն այլ կու ասէ»<sup>10</sup>: «Սոկրատ»-ը ոչ թե Սոկրատ Աքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» բուն թարգմանությունն է, այլ դրա խմբագրությունը՝ այսպես կոչված «Փոքր Սոկրատ»-ը, որտեղ՝ «Յաղագս Գրիգորի Անձիանձու աստուածաբան կոչեցելոյ վարք»<sup>11</sup> վերնագրված գլխում, այս ճառը վերագրված է Գրիգոր Աստուածաբանին: Սակայն հունարեն բնագրում<sup>12</sup>, ուստի և «Մեծ Սոկրատ»-ում<sup>13</sup> (որը բառացի հունարեն թարգմանություն է հունարենից) որպես հեղինակ վկայված է Գրիգոր Նյուսացին, ինչը և ընդունված է ժամանակակից գիտության մեջ:

Հնդհանրապես, երկու Գրիգորների գործերի հեղինակային պատկանելիությունը հաճախ շփոթի առարկա է դարձել<sup>14</sup>, ինչն ուշադրություն է գրավել դեռևս միջնադարում: Գամբանական այս ճառի հեղինակային պատկանելիությանն անդրադարձել են նաև ժամանակակից հայագետները<sup>15</sup>: Տվյալ դեպքում,

<sup>10</sup> Լուսանցի աչ անկյունում ավելացված է իտալացի Կեչառեցու ձեռնոց:

<sup>11</sup> Սոկրատայ Աքոլաստիկոսի եկեղեցական Պատմութիւն եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սիդեաստրոսի եպիսկոպոսի Հռովմայ, աշխատասիրութեամբ Մ. Տէր-Մովսէսեան, Վաղարշապատ, 1897, էջ 370:

<sup>12</sup> *Sokrates Kirchengeschichte*, Berlin, G. Ch. Hansen, M. Širinjan (eds), 1995, S. 262.

<sup>13</sup> Սոկրատայ Աքոլաստիկոսի եկեղեցական Պատմութիւն, էջ 370 (տե՛ս «Մեծ Սոկրատ»-ում): Ի դեպ, ասվածը ևս մեկ անգամ ամրապնդում է միտքն առ այն, որ մեզանում «Մեծ» և «Փոքր Սոկրատ»-ները հաճախ շփոթում էին: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Ширинян, «Краткая редакция древнеармянского перевода «Церковной Истории» Сократа Схоластика», *Византийский Временник* 43, 1982, с. 231-241:

<sup>14</sup> Տե՛ս օրինակ, նույն «Գիրք պատեառաց»-ում «Նորին Յաղագս Որդոյ բան երբորդ եւ տեսութիւն պատեառի» նախակրթությունը (ՄԲ 1879, 187բ), որը քննարկում է Գրիգոր Նազիանզացու Լ հառը (Greg. Naz., Or. 30, *De filio*) և որն «Առ որս» վերնագրով հայտնի ժողովածուի մաս է կազմում (ավելի մանրամասն տե՛ս Մ. E. Shirinian, “The Liber Causarum: A Mediaeval Armenian Isagogical Collection,” *Le Muséon*, 130 (1-2), 2017, p. 151, ծնթ. 63): Այս խնդրին առնչվում են նաև մի շարք այլ՝ դեռևս վերջնականապես շրջված հարցեր, օրինակ՝ Գրիգոր Աստվածաբանի երկերի՝ Ե դարի թարգմանություն համարվող հայերեն ժողովածուների ստեղծման տարեթիվը, ժողովածուում ընդգրկված գրվածքների փոխառնությունը կլն: Լստ որում, միայն հայկական ավանդություն են հայտնի նման մի քանի գործերի հավաքածուներ, որոնք սկզբնաբառերը սկսել են ընկալվել որպես վերնագիր: Արդյո՞ք հայկական հոդի վրա են կազմվել, թե՞ սկզբնական շրջանում դա հատուկ է եղել նաև այլ ավանդույթների և և առաջին հերթին՝ հենց հունականին: Նման մոտեցումը շատ հնարավոր է, սակայն այն կարող է հաստատվել միայն, եթե այդ մասին տեղեկություններ ի հայտ գան հունական աղբյուրներում:

<sup>15</sup> Տե՛ս մասնավորապես Կ. Մուսաղյան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, էջ 52-53, որտեղ հղված է խնդրի վերաբերյալ գրականությունը, նաև Կ. Մուսաղյանի աշխատությունից հետո լույս տեսած Ռ. Փոմսոնի գործը՝ *The Armenian Adaptation of the Ecclesiastical History of the Socrates Scholasticus [Commonly known as “The Shorter Socrates”]*, Translation of the Armenian Text and Commentary by R. W. Thomson (Hebrew

սակայն, այն Սոկրատի գրվածքի վերոնշյալ տարբերակների շփոթով չէ միայն պայմանավորված: Ինչպես արդարացիորեն նշում է Կիմ Մուրադյանը՝ «...նշված ճառը նազիանզացուն վերագրող տեղեկությունների հիմքը... ենթադրվող հավանական աղբյուրը, թվում է, նազիանզացու «Վարքի» ... գրվագն է»<sup>16</sup>: Սույն «Վարք»-ը մեզանում առկա է մի քանի խմբագրություն<sup>17</sup>, սակայն դրանք մանրամասն չեն ուսումնասիրվել և, կարևորը, պատշաճ չեն բաղդատվել հունարեն բնագրի հետ<sup>18</sup>: Հունարեն բնագրին առավել մոտ խմբագրություններից մեկը կարելի է համատեսական (սինոպտիկ) թարգմանություն համարել<sup>19</sup>, որոնք առավելապես տարածվել են Գրիգոր Վկայասերի օրոք, գուցե և նրա նախածեղծություն<sup>20</sup>:

«Պատմութիւն վարուց սրբոյն Գրիգորի Աստուածաբանի» վերոնշյալ գրվագը պատմում է Կոստանդնուպոլսի 383 թ. ժողովի մասին, գումարված էր Անտիոքի եպիսկոպոս սբ. Մելիտոսի առաջնորդությամբ, որը հանկարծամահ

---

University Armenian Texts, 3), Leuven – Paris – Sterling, VA, 2001, p. 131, 166: Կիմ Մուրադյանը խոսում է նաև «Գիրք պատնաոաց»-ում առկա՝ Խաչատուր Կեչառեցու նշանակալի մասին, նշելով, որ «...այդ դիտողության հիմքը Սեղբեստրոսի «Վարքի» հետևյալ դրվագն է. «...և Մելիտոսի եկելա յԱնտիոքայ ... յիւր եկեղեցին» (էջ 53, ծնթ. 10): Սակայն այդ հատվածը «Փոքր Սոկրատ»-ից է (և ոչ թե «Վարք Սեղբեստրոսի»-ից). այն հավելված հատված է, այսինքն՝ «Մեծ Սոկրատ»-ում բացակայում է (Սոկրատայ Աբղաստիկոսի եկեղեցական Պատմութիւն, էջ 497): Այստեղ անտեսված է նաև, որ այդ վկայությունն առկա է նախորդող շարադրանում՝ թե՛ «Փոքր Սոկրատ»-ի՝ Գրիգոր Նազիանզացու վարքին նվիրված գլխում (ինչպես նշվեց վերը), և թե՛ «Մեծ»-ում: Այսինքն՝ Սոկրատը վավերացրել է, որ այդ հատը գրել է Գրիգոր Նյուասցին:

<sup>16</sup> Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացին, էջ 54:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 13-14, ծնթ. 4:

<sup>18</sup> Թեև բնագիրը համեմատաբար վերջերս է հրատարակվել, սակայն այդտեղ հայերեն թարգմանությանն անդրադարձը շատ կցկտուր է. **Gregorius Presbyter, Vita Sancti Gregorii Theologi** (Corpus Christianorum Series Graeca) (Ancient Greek Edition), Brepols Publishers, 2001, p. 89:

<sup>19</sup> Մ. է. Շիրինյան, «Սուրբգրային վկայակոչումները վաղ շրջանի հայկական որոշ երկերում և հունարեն թարգմանություններում», *Էջմիածին*, 9, 2010, էջ 45-52: Այդ խոսքով, համառոտ թարգմանությունները, որպես կանոն, ենթադրում են տեխնիկ կրճատում, ամփոփում, բայց հաճախ ունեն նաև հավելումներ: Հնարավոր է՝ այդ հավելումների մի մասն առկա է եղել սկզբնագրում, բայց աղետումների կամ այլ պատճառներով կորսվել են՝ պահպանվելով միայն հայերեն թարգմանության մեջ:

<sup>20</sup> Թերևս այդօրինակ թարգմանությունների շարքին են վերաբերում Լևոն Տեր-Պետրոսյանի (Լ. Տեր-Պետրոսյան, «Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման», *Էջմիածին*, 1982, ապրիլ, էջ 49-50), Ազատ Բոզոյանի (Ա. Բոզոյան, «Այլազգի թարգմանիչները հայ մատենագրության մեջ», *Լևոն Խաչիկյան 90, Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.)*, Երևան, 2010, էջ 277-282:) և Դավիթ Գևորգյանի (Դ. Գևորգյան, «Գրիգոր Բ Վկայասերի նախածեղծ թարգմանական շարժումը», *ԲՄ ՈՁ* 34, 2022, էջ 93-112) հոդվածներում քննարկվածները:

եղավ ժողովի ժամանակ: Եվ սուրբ հայրերն ու թագավորը դիմեցին Գրիգոր Աստուածաբանին՝ «վասն իւրոյ առատապարգև շնորհացն, զոր ընկալեալ էր ի Հոգւոյն Սրբոյ»<sup>21</sup>, որպէսզի նա դամբանական խոսք ասի:

Իսկ սուրբն Գրիգորիոս ի մէջ ժողովոյն բարիոք զարդարեալ վայելչացոյց զօր կատարման նորա գերեզմանական բանիւք վարդապետութեամբ<sup>22</sup>:

Այս «տեղի»-ն բառացի չի համապատասխանում հունարեն բնագրին, այլ միայն փոխանցում է ընդհանուր միտքը<sup>23</sup>. այն, սակայն, վկայված է «Գիրք պատճառաց»-ի քննարկվող նախակրթութեան վերջում, որտեղ կարդում ենք.

Եւ ապա հարկ արարեալ հարքն եւ թագաւորն Գրիգորի Նիսացոյ [Աստուածաբանի<sup>24</sup>] բանալ զշնորհալից բերանն եւ խաւսել բանս գովութեան վասն ննջեցելոյն, քանզի առաւել նոյս էր ի խաւսել բանս ողորմագինս եւ ողբերգականս<sup>25</sup>:

Մեջբերված հատվածի «զշնորհալից բերանն» առանձնահատուկ ուշադրութեան է արժանի, մանավանդ որ երեք գլուխ հետո՝ «Նորին Ի բանսն եւ ի հաւասարեցուցիչն: Պատճառ ասացեալ յետոյ»<sup>26</sup> վերնագրի ներքո այս արտահայտությունը կրկնվում է.

Իսկ Գրիգոր լցեալ աստուածային հոգւովն՝ բանայր զշնորհալից բերանն ի սպասաւորութիւն բանի<sup>27</sup>:

Այսինքն Գրիգոր Աստուածաբանը պարզորոշ կերպով բնորոշված է որպէս «շնորհալից բերան» ունեցող, ինչը ոչ թե սոսկ բնորոշում է, այլ հատուկ եզր է թվում՝ կապված «Շնորհալի» պատվանվան հետ:

«Շնորհ» և «բերան» բառերը և դրանից ածանցյալները որպէս քրիստոնեութեան գաղափարախոսութեան կարևոր հասկացութիւններ արտահայտված են ինչպէս Աստուածաշնչում, այնպէս էլ քրիստոնեական այլ աղբյուրներում: «Շնորհ»-ի պարագայում, որպէս կանոն, սրբակենցաղ անձանց նկարագրող օրինակներ են արձանագրված (օր. Գործք 2 8 «լի շնորհաւք (=χόριτος) եւ զարութեամբ (=δυσάμεως)»): «Բերան» բառը կարծես ավելի լայն հասկացութիւն է, որը հաճախ սերելով քրիստոնեական խորհրդաբանութիւնից, փաստում է նաև, որ աշակերտն իր ուսուցչի «բերանն» է: Այդ խորհրդաբանութիւնը վկայված է արդէն Աստուածաշնչում, որտեղ ուսուցչի դերը հատկացված է Աստ-

<sup>21</sup> Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց, հտ. 1, Վեներիկ, 1874, էջ 314:

<sup>22</sup> Նոյն տեղում:

<sup>23</sup> Vita Sancti Gregorii, p. 188.

<sup>24</sup> Կրկին այլ՝ Խաչատուր Կեչաւեցու ձեռնով, սև թանափով գրված է ջնջված «Նիսացոյ» բառի վերևում:

<sup>25</sup> ՄՄ 1879, 203ա:

<sup>26</sup> Greg. Naz., Or. 19, Ad Iulianum exaequatorem.

<sup>27</sup> ՄՄ 1879, 206ա:

ծուն: Թե՛ Հին և թե՛ Նոր կտակարաններում հաճախ է հանդիպում նաև այն գաղափարը, որ Աստված է բացում այս կամ այն անձի բերանը և իր խոսքը դնում ընտրյալ մարդկանց՝ մարգարեների, աշակերտների բերանը (օր.՝ Ելք Դ 11-16, Թիւք ԺԼ 17, ԻԲ 38, ԻԳ 5, 12, Գործք Ժ 34, Բ Կորնթ. Զ 11, Եփես. Զ 19): Ավելին, Աստվածաշնչում հանդիպում է հենց «Աստծոյ բերան» բառակապակցությունը, որ հարաբերվում է Աստծո հայտնության և մարդկությանն աշակցելու գաղափարներին՝ ելնելով հետևյալ տողերից.

Եւ շարչարեաց զբեզ, եւ սովաբեկ արար զբեզ, եւ կերակրեաց զբեզ մանանայի զոր ոչ գիտէիր, եւ ոչ գիտէին հարբ քո. զի յայտ արասցէ թէ ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ՝ կեցցէ մարդ» (Բ Օր. Ը 3), և՛ «Ո՞վ է այր իմաստուն՝ և ի միտ առցէ զայս, եւ առ ո՞ւմ բան բերանոյ Տեառն, պատմեացէ մեզ թէ վասն է՞ր կորեաւ երկիր, լիաւ իբրեւ զանապատ առ ի չգոյէ անցատրաց (Երեմ. Թ 12):

Բացի այդ, Մատթեոսի ավետարանում, երբ սատանան գայթակղում է Հիսուսին և հայտնում, որ կյանքն ավելին է, քան այն, ինչ մարդը դնում է իր բերանը, Հիսուսը, մեջբերելով «Երկրորդում Օրինաց»-ի նշված օրինակը, ասում է. «Գրեալ է թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մատթ. Դ 4, *διὰ στόματος θεοῦ*): Այսինքն՝ մարդու գոյության կարևոր, եթե ոչ հիմնական պայմանը Աստծո բերանից ելած խոսքն է, որը կարելի է նույնացնել Աստվածաշնչի հետ:

Խնդրո առարկա եզրը մեծ դեր է խաղացել նաև Աստվածաշնչի դասական մեկնություն մեջ, որի կարևոր նպատակներից էր ապացուցել Հին և Նոր Կտակարանների սերտ կապը՝ ընդհուպ, որ Հնում արդեն արծարծված էին Նոր Կտակարանում կատարվելիք իրադարձությունները և գաղափարները: Սակայն ամենացայտուն օրինակները գտնում ենք Հովհան Ոսկեբերանի սուրբգրային մեկնություններում, որոնցում որպես «Աստծո բերան» կամ «Քրիստոսի բերան» բազմիցս հանդես է գալիս Պողոս առաքյալը: Այս հեղինակը մեծ թվով աշխատանքներ և մեկնություններ է նվիրել այդ առաքյալին և նրան իր հատուկ նվիրվածություն մասին հենց ինքն է գրում. «Ես սիրում եմ բոլոր սրբերին, սակայն առավելագույնս՝ երանելի Պողոսին»<sup>28</sup>: Այս համեմատությունն այնքան հաճախ է կիրառվել Ոսկեբերանի երկերում, որ անգամ հայտնվել է առասպելի<sup>29</sup> վրա հիմնված հետևյալ ասույթը.

<sup>28</sup> G. McLarney, “St. Paul and the Golden mouth: St. John Chrysostom’s interpretation of the Day of the Lord in 1 and 2 Thessalonians,” *Fellowship of Catholic Scholars Quarterly (Canada)* Summer-Fall (2008), p. 90.

<sup>29</sup> Համաձայն այդ առասպելի՝ Պողոս առաքյալը պատրիարքի խցում ինքն է շնչացել Ոսկեբերանի ականջին վերջինիս մեկնությունների նիշտ իմաստը, ինչը տեսել է Պրոկլոս սարկավագը (որը հետագայում հաջորդեց սբ. Հովհաննեսին պատրիարքական աթոռին): Այդ իսկ պատճառով Հովհան Ոսկեբերանը բնութագրվում է որպես Պողոսի բերան:

Χριστοῦ στόμα πέφυκε τὸ Παύλου στόμα, στόμα δὲ Παύλου τὸ Χρυσοστόμου στόμα<sup>30</sup> («Քրիստոսի բերանը դարձավ Պողոսի բերան, իսկ Պողոսի բերանը՝ Ոսկեբերանի բերան»):

Հովհան Ոսկեբերանը հաճախ է օգտագործում այս համեմատությունը Պողոսի թղթերի, մասնավորապես՝ Կորնթացիների Ա և Բ<sup>31</sup>, Թեսաղոնիկեցիների Ա և Բ<sup>32</sup>, ինչպես նաև Մատթեոսի ավետարանի մեկնություններում:

Իսկ Ոսկեբերանին վերագրվող՝ Պետրոս և Պողոս առաքյալներին նվիրված մի ճառում, որը դարեր շարունակ մեծ տարածում էր վայելում<sup>33</sup>, հեղինակը հետաքրքրական զուգահեռներ է անցկացնում նրանց միջև: Օժտելով նրանցից յուրաքանչյուրին հատուկ բնորոշչներով՝ նա ասում է, որ Աստված «վստահեց հեթանոսներին վրանագործ Պողոսին, որպեսզի վերջինս, Օրենքի և Շնորհի օգնությամբ, կարողանար Տիրոջ արյամբ ներկված կարմիր զգեստ հագնել մերկ մարդկանց»<sup>34</sup>, քանզի Պողոսը «Քրիստոսի բերանն է, սբ. Հոգու տավիղը ... Նա արագավազ ճամփորդ էր, երկնքում ճախրող արծիվ, աստվածային շնորհով լեցուն, և Տիրոջ կողմից վկայված էր, որ կբարձրացնի Նրա անունը ողջ աշխարհի առաջ»<sup>35</sup>:

Սակայն այս քարոզի ամենահետաքրքրական մասը հետևյալ հատվածն է.

Ἄπελθε εἰς τὴν θάλασσαν, καὶ βάλε ἄγκιστρον· καὶ τὸν ἀναβάντα πρῶτον ἰχθὺν ἄρας, ἄνοιξον τὸ στόμα αὐτοῦ, καὶ εὐρήσεις στατήρα (Mt

<sup>30</sup> Ասույրը Եռուսաղեմյան ձեռագրերից մեկում է (Sab. gr. 33, fol. 189), տե՛ս **A. Papadopoulos-Kerameus**, *Τεροσολυμιτικὴ βιβλιοθήκη ἢτοι κατάλογος τῶν ἐν ταῖς βιβλιοθήκαις τοῦ ἀγιωτάτου ἀποστολικοῦ τε καὶ καθολικοῦ ὀρθοδόξου πατριαρχικοῦ θρόνου τῶν Ἱεροσολύμων καὶ πάσης Παλαιστίνης ἀποκειμένων ἐλληνικῶν κωδίκων*, vol. 2, Saint-Petersburg, 1894, p. 77:

<sup>31</sup> Հմմտ. այդ մեկնության 13-րդ գրույրը, որտեղ նա խոսում է Պողոս առաքյալի բացված բերանի և ընդլայնված սրտի մասին. **St. John Chrysostom**, *Homilies on Second Corinthians*, [https://www.documentacatholicaomnia.eu/03d/0345-0407,\\_Iohannes\\_Chrysostomus,\\_Homilies\\_on\\_Second\\_Corinthians,\\_EN.pdf](https://www.documentacatholicaomnia.eu/03d/0345-0407,_Iohannes_Chrysostomus,_Homilies_on_Second_Corinthians,_EN.pdf):

<sup>32</sup> Հովհան Ոսկեբերանի երկերի պատկանելի թվում, որ ներառված են Patrologia Graeca շարքի 18 հատորներում, միայն Թեսաղոնիկեցիներին նվիրված քարոզները կամ հառ-մեկնությունները 16-ն են, որոնցից 11-ը վերաբերում են Թեսաղոնիկեցիների Ա, իսկ 5-ը՝ Թեսաղոնիկեցիների Բ թղթերին:

<sup>33</sup> **Johannes Chrysostomus**, *In Petrum et Paulum sermo* (CPG, 4572). Եթ ընդ Սաւլօ օջ սկիւորրաֆօ տձ էթնի Ենեչէրիսէս, Նա Ենծօթի ըիձ Նօմօսի կաի տիջ իչարիտօս յսմօսս, տօ կօկկինօն Ենծսմա, տօ Եջ յձատօս կաի Եիմատօս Դէսօտիկօսկօս Եաֆէն. տէս նսսև՝ [https://43e0a100-ec26-4541-811a-c59911a3353b.filesusr.com/ugd/38f972\\_6523fc5cc1754fba892f11cddb391783d.pdf](https://43e0a100-ec26-4541-811a-c59911a3353b.filesusr.com/ugd/38f972_6523fc5cc1754fba892f11cddb391783d.pdf); *In Petrum et Paulum sermo*, PG 59, pp. 491-496 (Aldama, “Repertorium pseudochrysostomicum”, no. 364; BHG 1497b; CPG, 4572).

<sup>34</sup> *In Petrum et Paulum sermo*, PG 59, p. 492.

<sup>35</sup> Սաւլօս, տօ ստօմա տօ՞ Միստօս, ի լսրա տօ՞ Սնէսմատօս, ... օ օջսծրօմօս ծրօմէս, օ Եիս օրնանօն Ենստէմօնօս Ետօձօ, օ թէիձ իչարիտօս քէքլիւրօմօնօս, օ մարտրօսմօնօս յտօ Մարիօս Եաստէձէս տօ օնօմձ Եստօ՞ Ենօթիօն քէջ տիջ օիկօմէնիջ. նսսլից տէրնս, էջ 493:

17:27). Θάλασσαν λέγων, τὴν ἄστατον τῶν ἀνόμων Ἰουδαίων γνῶμην· ἄγκιστρον, τὸν ἔντεχνον λόγον τῆς διδασκαλίας· ἰχθὺς, τὸν νόμον σημαίνει. **Τὸ δὲ ἀνοίξαι τὸ στόμα αὐτοῦ, τὸ ἐρμηνεύειν αὐτόν λέγει·** τὸ δὲ εὐρεῖν ἐν αὐτῷ στατῆρα, τὸ πνευματικῶς αὐτόν ἀνακρίνειν σημαίνει<sup>36</sup> (... երբ ի ծով՝ եւ րնկեա կարթ, եւ գառաջին ձուկնն որ ելանէ՛ առ, եւ բաց գրեթան նորա, եւ գառանիցես սատեր)»<sup>37</sup>. «Ծով» ասելով՝ նա նկատի ունի անօրէն հրեաների անկայուն կամքը: «Կարթ» ասելով՝ նկատի ունի վարդապետության արհեստավարժ (նորթ) խումբը: «Ձուկ»-ը Օրենք է նշանակում, իսկ «**նրա բերանը բացելը**»՝ դրա [Օրենքի՝ է. Մ. Շ.] **մեկնությունը**: Եվ «նրա մեջ ստատեր գտնելը» նշանակում է Օրենքի հոգևոր իմաստի բացահայտումը:

Այստեղ կարելի է տեսնել «բերան» բառի մեկ այլ խորհրդաբանություն. այս հասկացությունը հնարավոր է կապել «մեկնություն» հետ, քանի որ պարզորոշ ասվում է, որ «բերանը բացելը» կարող է նաև «մեկնելու» իմաստ ունենալ: Սույն մոտեցումը շատ հավանական է, քանի որ միջնադարում մեկնելն ուսուցանելու կարևորագույն մասերից էր, և պատահական չէ, որ «ուսումնական տեղի»-ն (τόπος διδακτικός) կոչվում էր նաև «մեկնելի տեղի» (τόπος ἐξήγητικός)<sup>38</sup>: Վերն արդեն ասվել է, որ այդ արտահայտությունը նշանակում է նաև ուսուցանել՝ «Աստծո խոսքը» փոխանցել: Կարելի է վկայակոչել նաև մեկ այլ օրինակ Ոսկեբերանի Մատթեոսի ավետարանի մեկնությունից. καὶ ἀνοίξας τὸ στόμα αὐτοῦ ἐδίδασκεν αὐτοὺς λέγων («Բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա», Մատթ. Ե 2): Թվում է՝ այստեղ ոչ մի խորհուրդ չկա, սակայն պարզամտություն կլիներ կարծելը, որ Ոսկեբերան պատվանուն կրող ճարտասան այս հեղինակը բացատրեր նման տրամաբանական գործողություն, որ պետք է ուսուցանելու համար՝ բերանը բացել: Բացի այդ, նա շատ սիրելի և հաճախ է կիրառել «բերանը բացելով» (ἀνοίξας τὸ στόμα) արտահայտությունը<sup>39</sup>:

Հովհան Ոսկեբերանի գրվածքներից այստեղ քննարկված գրեթե բոլոր օրինակներն առկա են նաև հայերեն թարգմանություններում (քանի որ նրա վիթ-

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 492:

<sup>37</sup> Այս հատվածը հայերենում համապատասխանում է Մատթ. ԺԷ 26-ին (հունարենի 27-ի փոխարեն):

<sup>38</sup> **Porphyrii Quaestionum homericarum ad Iliadem pertinentium reliquias**, collegit disposuit edidit **H. Schrader**, Lipsiae: in aedibus B. G. Teubneri, 1880-1882, III, I, 237, 16. Կրթական դարտում մեկնությունների առաջնակարգ տեղի մասին տե՛ս նաև՝ **Մ. Է. Շիրինյան**, *Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը. հայկական և հունական դասական և բյուզանդական, աղբյուրների բաղադատությունը*, Երևան, 2005, էջ 139:

<sup>39</sup> **Iohannes Chrysostomus**, *Fragmenta in Job*: Ἴδωμεν οὖν, τί ἀνοίξας τὸ στόμα φθέγγεται. **Iohannes Chrysostomus**, *Interpretatio in Danielelem prophetam*: καὶ ἀνοίξας τὸ στόμα αὐτοῦ ἐν μέσῳ τοῦ πυρὸς εὔτεν.

[https://documentacatholicaomnia.eu/1004/1003\\_Ioannes\\_Crysostomus\\_010/0345-0407\\_Iohannes\\_Chrysostomus,\\_Interpretatio\\_in\\_Danielem\\_prophetam,\\_MGR.html](https://documentacatholicaomnia.eu/1004/1003_Ioannes_Crysostomus_010/0345-0407_Iohannes_Chrysostomus,_Interpretatio_in_Danielem_prophetam,_MGR.html).

խարի ժառանգության մեծ մասը թարգմանվել է), մասնավորապես տարածված է «Եւ Պաւղոս անաւթն ընտիր եւ տաճար Աստուծոյ եւ բերան Քրիստոսի...»<sup>40</sup>: Դրանք լայնորեն ընդգրկված են ճառընտիր ժողովածուներում, մասնավանդ Տոնականներում, որոնք, որպես կանոն, բաղկացած էին «ընտիր երկերից» և ընթերցվում էին հատուկ տոներին<sup>41</sup>: Անշուշտ Ոսկեբերանի երկերը մեծ ներգործություն են ունեցել հայ եկեղեցական մատենագրության վրա, և հայ հեղինակների գործերում տեսանելի է այդ ճարտասան աստվածաբանի ազդեցությունը, որոնք լայնորեն օգտվել են թե՛ իր երկերից ու մեկնություններից և թե՛ դրանցում արտահայտված գաղափարներից: Պողոս առաքյալին «Աստծո» կամ «Քրիստոսի բերան» հորջորջելը դրանցից մեկն է:

Հայերեն բնագրերում առկա են նաև քննարկվող եզրերի և արտահայտությունների բացատրություններ: Այսպես, «Յաճախապատում ճառք»-ում պարզաբանվում է, թե ինչ է «բերան Աստուծոյ»-ն.

Զի այնպիսիքն են բերան Աստուծոյ, որ դարմանաւ կենդանաւար խրատուն լի է, եւ որպէս յաղբեւէ բղիւէ զկենացն խրատաւ<sup>42</sup>:

*Իսկ Յովհան Մանդակունին գրում է.*

Այլ վասն զի սէրն աստուածային եւ յաննարս հնարի, եւ ժոխ յաղագս փրկութեան, եւ ջանայ ընդ նեղ եւ ընդ նուրբ ծերպս մտանել առ ի շահ եւ յաւգուտս լսողաց. հայել յաստուածային բանին զարութիւնն, երբ դարձն զեղբայրն քն՝ զի քանցսին մեղք քն. զի որ ջանայ, ասէ, դարձուցանել զոգի մոլորեալ, զբազմութիւն մեղաց իւրոց փարատէ. եւ որ հանէ զպատուականն յանարգէն, բերան Աստուծոյ կոչեսցի<sup>43</sup>:

Հայկական աղբյուրների ընձեռած նյութից մասնավոր ուշադրության են արժանի հիշատակարանները, որտեղ ևս հաճախ է հանդիպում Պողոս առաքյալին որպես «Աստուծոյ բերան» նկարագրող արտահայտությունը, օրինակ.

<sup>40</sup> Ս. Հովհան Ոսկեբերան, ճառք, նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, աշխատ.՝ Հ. Քյոսեյանի, էջմիածին, 2008, էջ 376:

<sup>41</sup> Տե՛ս օրինակ՝ ՄՄ 1521, ՃԱՌԸՆՏԻՐ (1406 թ.). «244ա-6բ Յոհանու Ոսկիբերանին ասացեալ ի բանն Պաւղոսի, որ ասէ ի Թեսաղոնիկեցոց թղթին. Մեք որ կենդանիս մնացեալ իցեմք - Առաքեալն Պաւղոս, բերանն Աստուծոյ եւ անաթն ընտրութեան...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ե, կազմ. Օ. Եգանեան, Երևան, 2009, սյուն. 221-222, 230), կամ՝ ՄՄ 4869, ՃԱՌԸՆՏԻՐ-ՏՕՆԱԿԱՆ (1482 թ.). «616ա-21ա Նորին Յովհաննու Ոսկիբերանի ասացեալ ի նոյն խորհուրդ Ի գալուստն Տեառն - [Բան.] (Ա. Թեսաղ., 4,14) Մեք որ կենդանիս մնացեալ իցեմք... [Մեկն.] Առաքեալն Պաւղոս բերանն Աստուծոյ եւ անօթն ընտրութեան...» (շնորհակալությամբ հայտնում եմ, որ սույն ձեռագրի՝ դեռևս չհրատարակված այս հատվածը տրամադրել է ձեռագրի նկարագրող Ն. Վարդանյանը):

<sup>42</sup> Տե՛ս Գրիգոր Լուսատւիչ, Յաճախապատում ճառք, ՄՀ, հտ. Ա, Ե դար, Անթրիպաս-Լիբանան, 2003, էջ 116:

<sup>43</sup> Յովհան Մանդակունի, ճառք՝ «Թուրք վասն քանանայից տեսչութեան ի վերայ ժողովրդեան», ՄՀ, հտ. Ա, Ե դար, Անթրիպաս-Լիբանան, 2003, էջ 1196:



Գրեցաւ սուրբ եւ քրիստոսաձիր տառս աստուածայնոց փողոյն եւ տիեզերաց վարդապետին Պաղոսի, որ եւ Բերան Աստուծոյ անուանի, նոյն եւ բանք սորին բղխեալ իբրեւ ի բերանոյ Աստուծոյ յորդայխաղաց վտակաւ ուռուգանէ, զծարսեալ հոգիս մարդկան եւ սնուցանէ դաստիարակաւ հոգւոյն իբրեւ զպարտեզ ջրալից անկեալ ի տուն Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ ծաղկեալ<sup>44</sup>:

Այս ձեռագիրը (ՄՄ 5343) ընդգրկուած է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկէից թղթոցն», որում այս եզրը յուրահատուկ տեղ է զբաղեցնում: Մեջբերումը հիշատակարանի փառատրական հատվածից կամ «փառք»-ից է և ներկայացնում է յուրատեսակ կաղապար, ուստի և այն միակը չէ հիշատակարաններում<sup>45</sup>: Նույն բանաձևի առկայությունը մի քանի ձեռագրում հետաքրքրական է մի քանի առումով: Նախ, այն կարևոր է, քանի որ Պողոս առաքյալի նման հորջորջումը փոխանցում է Հովհան Ոսկեբերանից սերող ավանդությունը: Երկրորդ՝ կրկնվող «փառք»-երը ենթադրության տեղի են տալիս, որ դրանց կաղապարները կապված են ձեռագրի բովանդակության<sup>46</sup> հետ: Այդ միտքը հաստատվում է նաև տարբեր բանաձևերի առկայությամբ. այսինքն՝ կան հիշատակարաններ, որոնց «փառք»-երն ունեն ձեռագրի բովանդակությանը համահունչ մեկ այլ բանաձև: Քննարկվող դեպքերում «փառք»-երում կամ բուն հիշատակարանում նման կաղապար ունեցող գրեթե բոլոր ձեռագրերի բովանդակությունը հիմնականում կամ Կաթողիկէ թղթերի, կամ Պողոս առաքյալի թղթերի մեկնությունն է: Իսկ, ասենք, ավետարան պարունակող ձեռագրերի հիշատակարանների «փառք»-երից շատերը մեկ այլ կաղապար ունեն, օրինակ.

Եւ դարձեալ մեղմական ճայթիք ճառեալ ի ճաշակս լսելեաց, բարբառեալ ի բերանոյ հոգէկիր եւ քրիստոսազգեաց արանցն՝ չորից սրբազան եւ քառաբուխ վտակացն՝ [Մ]ատթէնսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու, ի լուսոյն [ա]ռաջնոյ յար //ից հոգոյն լուսա[ւ]որեալ լոյսս //ս գերագանց, պսակ ի գլուխ ուն[ե]լով զլուսոյ ծաղիկն հաստոյ զՔրիստոս<sup>47</sup>:

Կամ՝

<sup>44</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա. (1301-1325 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Դադարոսյան, Երևան, 2018, էջ 44:

<sup>45</sup> Կաղապարը նույնությամբ կրկնվում է, օրինակ. ՄՄ 5606 ձեռագրում («Մեկնութիւն թղթոցն Պողոսի»), Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա., էջ 114), ինչպես նաև Նոր Զոռայի «Մասունք Աստվածաշնչի» պարունակող ձեռագրում, նույն տեղում, էջ 186: Երբեմն Պողոսի համար օգտագործված է նույն բնորոշումը, բայց ոչ նշված բանաձևով, օրինակ. «Ի լոյս յաւելեալ ի լոյս, ի բերանն Քրիստոսի՝ բերանն Պաղոսի, իմացիս ամե[նայն] իրաւ իմաստուն լաւ...», նույն տեղում, էջ 160:

<sup>46</sup> Ձեռագրերի բովանդակությունն էլ երբեք պատահական չէ, և տարաբնույթ ժողովածուների նյութն իհարկե ընտրված է:

<sup>47</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա., էջ 213:

Փառ՛ք երբակի, եռակի, եզ[ա]կի, համահաւասար Սուրբ Երոռդութե[ա]նն, որ արժանի արար զանարժանութիւնս իմ հասանեալ յաւարա<ն>ումն սուրբ Աւետարանիս, որ է ի բերանոյ Տեառն մերոյ <եւ> եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի քարոզ եւ պարծանք ընթանուր հասարակ տիեզերաց եւ է պարծանք եկեղեցականաց եւ սրբոց<ոց> նկնատրաց եւ թագատրաց, վարդապետաց, հայրապետաց, կրանատրաց, վանականաց, սարկաւագաց, դպրաց եւ աշխարհականաց՝ մեծաց եւ փոքուաց<sup>48</sup>:

Կամ՝

Փա՛ռք քեզ անսահման անուն եւ անզուգական անձնատրութիւն՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. այժմ եւ յափտեանս յափտենից. ամէն: Գրեցաւ գերարփիս այս եւ գերալուրս, գերագոյն եւ գերակատարս, գերունակ իմաստիք Հոգոյն բարբ[առ]եալ ի բերանոյ քրիստոսագեաց արանցն, քառաբուխ վտակացն՝ Մաաթէսի, Մարկոսի, Դուկայ եւ Յոհաննու...<sup>49</sup>:

*Մեզ հետաքրքրող որոշ տեղեկութիւններ ամփոփված են փառատրական հատվածներում կամ «Փառք»-ում, ուստի կարևոր է դրանց ուսումնասիրությունը, և անթուլատրելի է դրանք զանց առնելը, ինչպես դա արվում էր «նախկինում, երբ շատ հաճախ փառատրական այդ հատվածները կրճատվել կամ ընդհանրապես դուրս են թողնվել հիշատակարանների հրատարակության ժամանակ»<sup>50</sup>:*

*Վերջերս ակտիվ հետաքրքրություն է արձանագրվում հայկական ձեռագրերի հիշատակարանների հանդեպ, և կան ուսումնասիրություններ<sup>51</sup>, որոնցում հիշատակարանները նորովի են քննարկվում: Մասնավորապես, հետաքրքրա-*

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 295:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 379:

<sup>50</sup> Խ. Ա. Հարությունյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները*, Երևան, 2019, էջ 89-90:

<sup>51</sup> E. Van Elverdinghe, “Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons,” *Journal of Data Mining and Digital Humanities*, Vol. Special Issue on Computer-Aided Processing of Intertextuality in Ancient Languages, 2017-2018, p. 1-8; Նույնի՝ *A Child in Zion: The Scriptural Fabric of Armenian Colophons*. Louvain, 2021; Նույնի՝ *Armenian Colophons as Literary Compositions*, Louvain, 2023, Խ. Հարությունյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները*, A. Sirinian, “Caratteristiche dei colofoni armeni e un gruppo in particolare: i colofoni della critica alle autorità politiche e religiose”, in *Colofoni armeni a confronto: le sottoscrizioni nei manoscritti in ambito armeno e nelle altre tradizioni scritte del mondo mediterraneo: atti del colloquio internazionale*, Bologna, 12-13 ottobre 2012, Sirinian, Buzi & Shurgaia (eds), Roma, 2016, pp. 13-45, Օ. Խաչատրյան, «Որոշ յուսօրինակ կաղապար-հիշատակարաններ հայերեն ձեռագրերում», *Գիտական Արցախ*, 2022, թիվ 2 (13), էջ 156-163:

կան է դրանց կաղապարային կառուցվածքի հարցը, ինչպես նաև համաքրիստոնեական համատեքստում դրանք ուսումնասիրելու միտումը<sup>52</sup>:

Այնուամենայնիվ հետազոտությունները կարծես չեն անդրադառնում վերնարժարժված խնդրին, այն է՝ հաճախ հիշատակարանների կաղապարներն ու բանաձևերն ունեն բովանդակային ուղղվածություն, որը սերտորեն առնչվում է ձեռագրում արտահայտված հիմնական գաղափարի հետ: Այս հարցի համապարփակ ուսումնասիրությունը ենթադրում է նաև հետևյալ խնդիրների քննությունը. ա) հնարավոր է արդյոք գտնել այդ հիշատակարանը նախագաղափար օրինակում, բ) կարելի՞ է պարզել տվյալ կաղապարի հեղինակին, գ) արդյո՞ք տարբեր ձեռագրերում օգտագործված նույնատիպ բանաձևերի հեղինակը միևնույն անձը չէ, դ) արդյո՞ք այդ ձեռագրերը ծագում են նույն վայրից, այսինքն՝ ձեռագրերի աշխարհագրությունը, ե) արդյո՞ք այդ ձեռագրերը քիչ թե շատ նույն ժամանակաշրջանին են պատկանում, զ) արդյո՞ք կան այնպիսի կարևոր թեմաներ, գաղափարներ կամ յուրահատուկ մտքեր, որոնք միայն հիշատակարաններում են հանդիպում: Առաջադրված հարցերին հնարավոր է համապարփակ պատասխանել միայն, երբ բաղդատվեն խնդրին վերաբերող բոլոր տեղեկությունները հայերեն ձեռագրերում, ինչպես նաև Պողոս առաքյալի նամակների բոլոր մեկնությունները և (ոչ միայն հայերեն աղբյուրներում), ինչն առանձին, ծավալուն ուսումնասիրության նյութ է: Պակաս կարևոր չէ նաև, որ հետազոտողը աստվածաբանական կրթություն ունենա, որպեսզի կարողանա ընկալել այն խորհրդաբանությունը, որը թաքնված է երբեմն պարզամիտ բառեր թվացող եզրերում:

Ամփոփելով հիշատակարաններում պահպանված հարուստ տեղեկությունների ակնարկը, նշենք, որ դրանցից մեկում ևս մի հետաքրքրական օրինակ գտանք առ այն, որ աշակերտները վարդապետի բերանն են: ՄՄ 1530 ձեռագրում, որը կրկին Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն եօթանց թղթոցն կաթողիկեայց» գործն է պարունակում, կարդում ենք.

**Քանզի ասաց ոմն յիմաստնոցն, եթե. «Մածկեալ գիտութեան վարդապետի՝ բերան են աշակերտն, քանզի լուսաւորիչ եղեն ազգիս Հայոց ի մերս ժամանակի»<sup>53</sup>:**

<sup>52</sup> Կարևոր է էմանուել Վան էվերդինգեի հետևողական աշխատանքը. նա կենտրոնացած է այս թեմայի վրա և կարծես նպատակ ունի ուսումնասիրելու հարցը համապարփակ ձևով՝ ներգրավելով բոլոր հնարավոր հայեցակետերը:

<sup>53</sup> ՄՄ 1530 (1289 թ.), 1ա-3բ, հիշատակարան: Տես նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դ.դ., աշխատ. Ա. Ս. Մաթևոսյանի, էջ 171: Ի դեպ ձեռագրի ստացողի հար անունը Նիկոլ է (63բ՝ «ողորմեա ստացողի... պարոն Թորոսին, մակամուն կոչեցեալ Հուսամատին, եւ հարս նորին՝ պարոն Նիկապին»), հմմտ. նաև 310ա, 397ա), ինչը վկայում է, որ այդ անունը գործածվել է ոչ թե ԺԷ դարից (երբ այն հաճախ է վկայված), այլ արդեն ԺԳ դարից:

Նմանատիպ տեղեկություն տրամադրում է նաև հ. Ալիշանը և, ինչպես հաճախ ենք հանդիպում նրա ուսումնասիրություններում, նա որևէ սկզբնաղբյուր չի նշում, իր գրվածքը փաստորեն աղբյուր դարձնելով<sup>54</sup>: Թերևս «ասաց ոմն յիմաստնոցն» բառակապակցությունից կարելի է ենթադրել, որ Ալիշանը հենց այս հիշատակարանից է օգտվել՝ ծաղկեցնելով և մեկնաբանելով այն: Այս հատվածում նա խոսում է հենց Ստեփանոս Մանուկի և Կարմիր վանքում ուսանող նրա աշակերտների մասին, որոնցից մեկն էլ Սարգիս Շնորհալին էր<sup>55</sup>: Այս օրինակը մեզ դրդեց փնտրել «բերան» եզրը հենց Սարգիս Շնորհալուն՝ ընդհանրական թղթերի մեկնությունում<sup>56</sup>, և գտնվեցին այդպիսիք.

Վասն զի պատգամս մարգարեիցն որ առ մեզ՝ բերան Աստուծոյ անուանիմք. ըստ որում եւ ասացեալմն ասեն՝ բերան Տեառն ամենակալի խօսեցաւ զայս<sup>57</sup>:

Կամ՝ Այսպիսի զգուշութեամբ եւ Պօղոս խրատէ՝ բերանն Քրիստոսի, անօրն ընտրութեան, բարտք վերակացուն հօտից<sup>58</sup>:

Հիշատակարաններում կարելի է նաև հանդիպել Հովհան Ոսկեբերանի պատվանվան ուշագրավ մի տարբերակ, որում այս բարդ բառի բաղադրիչներն առանձին են վկայված.

Արդ, որ վայելիցէ հոգէշնորհ վարդապետութենէս եւ ի բարի նախանձ բանիցս վարդապետին **Քերան ոսկի** կոչեցեալ, յիշեցէ՛ք աղօթիմ գտացօղ գրոյս յայսմիկ գտէր Ներսէս աստուածային շնորհօքն զարդարեալ եւ գիտութեամբ լցեալ, որ ի սոյն ամի հանգեալ ի Քրիստոս, զոր Տէր Աստուած հանգուցէ ընդ սուրբս իւր, նա եւ զծնօղս իւր եւ զազգականս եւ զբարեկամս իւր, որ մեծափափագ ըղձիմ գրել ետ սա ի պայծառութիւն եւ ի զարդ եկեղեցոյ իւրոյ. ամէն<sup>59</sup>:

Կամ՝ Քրիստոսի կարողութեամբն եւ ազնութեամբ ասարտեցաւ Առաջին

<sup>54</sup> Ալիշան, *Շնորհալի եւ պարագայ իւր*, էջ 51. «Ասաց ոմն յիմաստնոցն, եթէ ծածկեալ գիտութեան վարդապետի՝ բերան են աշակերտքն: Եւ անհ շատ աշակերտներէն զատ (որոց անուանմն ալ ծածկուած են) կան չորս աշակերտք ծանօթք, չորս արժաթի բերանք, որք մեր ժԲ մեծանշան դարուն դպրութեան եւ գիտնոց պարագրովք են, եւ ամենէն ընտիր եւ յստակ հայկաբանութեամբ եւ վայելչաբանութեամբ գրօղք. Իգնատիոս եպիսկոպոս՝ Դուկասու աւետարանի մեկնիչն, Սարգիս վարդապետ, Կաթողիկեայց թղթոց մեկնիչն, եւ երկոքին Պահլաւունի հարազատքս՝ Գրիգորիս եւ Ներսէս»:

<sup>55</sup> Հմմտ. **Երիկնյան. Մ. է.**, «Ղևոնդ Ալիշանը Սև լեռան վանքերի մասին», *Ղևոնդ Ալիշան-200 (Հորեկյանական միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2021, 6-8 հուլիսի)*, Երևան, 2021, էջ 75:

<sup>56</sup> Հատկանշական է, որ այս մեկնությունում «շնորհ» բառը ամենաօգտագործվողներից է:

<sup>57</sup> **Սարգիս Շնորհալի**, *Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց*, Կոստանդինուպօլիս, 1828, էջ 152:

<sup>58</sup> Նոյն տեղում, էջ 186:

<sup>59</sup> ՄՄ 1913, 182ա:

գիրքս Մեկնութեան սրբոյ Աւետարանին Յովհաննու, զոր բարձր փարոզն տիեզերաց Բերանն ոսկի արտայայտեաց ի զմայլումն մանկանց եկեղեցոյ եւ ի կատարումն հերձուածողաց<sup>60</sup>:

Այս օրինակները փաստում են, որ «Ոսկեբերան» պատվանունը<sup>61</sup> քննարկված եզրերի հետ կապելը տրամաբանական է. դա վկայում է նաև վերն արծարծված հատվածը: Փոքր-ինչ շեղվելով բուն նյութից՝ համեմատենք «Ոսկեբերան» և «Ոսկեփորիկ» եզրերը: Վերջինս զանազան հետաքրքրական եւ արժեքավոր նյութերի ժողովածու կամ գանձարան (դարան) է, կարծես թե սահմանելով այս կամ այն հավաքածուի առաջնակարգ, ընտրյալ, պատվավոր լինելը: Այսինքն, այն ևս կարող է ընկալվել որպես յուրատեսակ պատվանուն: Արդ, հնարավոր է արդյոք ենթադրել, որ Ոսկեփորիկ եզրը ստեղծվել է մեզանում Ոսկեբերան հայտնի անվան նմանությունով: Եթե անդրադառնանք այս անվան ստուգաբանությանը, թերևս, հարցադրումն ավելի տրամաբանական կհնչի, քանի որ «բերան» բառի հունարեն համարժեքն է *στόμα* (*στόματος*), իսկ *στόμαχος*<sup>62</sup> հունարեն «փոր»-ն է: Ավելին, «փոր» բառը կամ դրա հոմանիշները («ստամոքս», «որովայն») ևս ունեն իրենց խորհրդաբանությունը<sup>63</sup>, սակայն սա ընդարձակ թեմա է այստեղ քննարկելու համար:

Ամփոփենք. պատվանունների ընձեռած նյութը շատ ուշագրավ է և արժանի է ուսումնասիրության: Այստեղ արծարծված գրեթե յուրաքանչյուր պատվանուն կարող է առանձին հետազոտության նյութ դառնալ: Հիմնական եզրակացություններն են. «Շնորհալի» պատվանունը, բացի հ. Ալիշանի թվարկած շնորհներից, ներառում է առնվազն ևս երեք իմաստ՝ ճարտասան, ուսուցիչ և մեկնիչ: Ըստ որում, այդ իմաստները կապված են «բերան» բառի հետ, որն իր հերթին հաճախ եզրի իմաստ է ձեռք բերում: Այսինքն, այս պատվանունը ենթադրում է նաև «շնորհալի բերան» ունեցող մարդկանց, որոնք օժտված են նաև

<sup>60</sup> ՄՄ 1347, 210բ, հմմտ. նաև 418ա. «...արար գունակ առաքելականն դասուց հայր սուրբ Յոհանն, զոր ի մերմէ գրգանց պանծալի առնել կամեցողացն յոսկի համակեալ գունակացեալն բերան գՀոգին Սուրբ»:

<sup>61</sup> Թեև վարդապետը մահից հետո է արժանացել դրան:

<sup>62</sup> Ի դեպ «ստամոս» բառը սրանից է փոխառված:

<sup>63</sup> Տե՛ս օրինակ՝ Երեմիայի մարգարեությունում վկայված «Որովայն իմ որովայն ցավէ...» (Երեմ. Գ 19-20), որը հետագայում դարձել է մեկնությունների առարկա, հմմտ. Գրիգոր Նազիանզացու աստվածաբանական երրորդ նաղի՝ «Առ Կլիդոնիոս երրորդ՝ ի բանն մարգարեական» մեկնությունը (Greg. Naz., Or. 17, *Ad cives Nazianzenos vel In praefectum irascentem*): Ինչպես այս տարընթեցումներով լի աստվածաշնչյան հատվածը, այնպես էլ Գրիգոր Նազիանզացու աստվածաբանական նաղերի հայերեն թարգմանությունները դեռևս շատ քիչ են ուսումնասիրված:

ճարտարախոսի, ուսուցչի և մեկնիչի շնորհներով: Դրանք առաջին հերթին Պողոս առաքյալը, Գրիգոր Աստվածաբանն ու Հովհան Ոսկեբերանն էին, որոնք ևս ի թիվս այլ բազում շնորհների՝ համատեղում էին դրանք: Իսկ թե ինչու էին հենց այս մարդիկ հորջորվում այդպես, ևս բացատրելի է: Պողոս առաքյալի պարագայում դա հասկանալի է և լավագույնս լուսաբանված է Հովհան Ոսկեբերանի կողմից: Իսկ Գրիգոր Նազիանզացին և Հովհան Ոսկեբերանը եկեղեցու հայրերի ընտրյալ այն խմբում էին, որոնց գործունեությունը նպաստավոր էր «Ճիշտ հավատքի» սահմանման և պաշտպանության համար: Այդ խմբի առաջին շարքերում լինելը փաստված է ոչ միայն հայրաբանական երկերով, այլև նրանց նվիրված բազմաթիվ պատկերներով: Ուստի պատահական չէ, որ Ներսես Շնորհալին «Ընդհանրական թղթում» (Ընդ. 216), «հեզուլթեամբ» պատասխանելով իր ընդդիմախոսին, բերում է հենց Գրիգոր Աստվածաբանի եւ Հովհան Ոսկեբերանի օրինակները:

Ինչ վերաբերում է Ներսես Շնորհալուն և նույն պատվանունը կրող մյուս վերը թվարկված շնորհալի հեղինակներին, ապա նրանցից յուրաքանչյուրը ևս օժտված էր նշված առաքինություններով: «Մթին» Սև Լեռան վանքերի «լեռնափակ համալսարան»-ի դպրություն յուրովի միջազգային կենտրոնի<sup>64</sup>, համբավավոր վարդապետ Ստեփանոս Մանուկի սաները, ինչպես գրում է հենց Ներսես Շնորհալին, սրբակենցաղ կյանքով ապրող «գբանի սիրողան» էին, «հոգիք լուսաւորեալ... եւ առ ինքեան բնակեցուցեալ զանմարմնոց կեանս, զԳիրս Հոգւոյն միշտ ընթերցեալ»<sup>65</sup>: Ի թիվս այլ շնորհների, նրանց տրված էր նաև «շնորհն բանի...» և դառնալով անվանի վարդապետներ ու մեկնիչներ, նրանք հանդիսացան իրենց ուսուցչի «բերանը»:

Մասնավորապես աչքի ընկավ Ներսես Կլայեցին, ով իր կաթողիկոսության տարիների ընթացքում նաև իր «շնորհալի բերան»-ի շնորհիվ հասավ բաղձալի խաղաղության, ինչի համար և կոչվեց խաղաղարար կաթողիկոս... Եթե՞ն երկար դարուց բարդեալ եւ բրգեալ յունական եւ հայկական ատելութիւնմ՝ ասոր բերնով եւ գրչով կը թուլնան կը փայփային, եւ երկու ազգի ապառաժ սիրտմ՝ իբրեւ երկու հրահալ մետաղմ՝ կը դրդին կը տըռփան իրար ձուլուելու, երբ այս ամեն բաներով նոխացեալ անձ մը՝ իբրեւ ամենայն հոգեկան, մտաւոր եւ մարմնաւոր ձրիմ ներդաշնակեալ գործիմ մը՝ հնչէ զվայլեցընելով զՀայ եւ զՅոյն, զԼատին եւ զԱսորի, զԱրձաւոր եւ զհեռաւոր:

<sup>64</sup> Հմմտ. Ծիրինյան, «Ղևոնդ Ալիշանը Սև լեռան վանքերի մասին», էջ 70-81:

<sup>65</sup> Ներսես Շնորհալի, *Վիպասանութիւն*, ՄՀ, ԻԱ հատոր, ԺԳ դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Ա, Երևան, 2018, էջ 125, տող 1298, 1304-135:

— աննախանձ նկատողին խիղճն ալ չի կըրնար չկանչել բարձրաձայն, թէ այդպիսի նախախնամեալ աստուածապարզել անձ մը՝ հարկ էր որ ըլլայ Շնորհալի<sup>66</sup>:

Գուցե կարելի է մտածել, որ Կիլիկիայի Սև վանքերում առանձնահատուկ ուշադրութեան արժանացած «շնորհն բանի» հետագայում ավանդական դարձավ Կիլիկիայի հոգևորականների համար, ինչն այսօր էլ պարզորոշ նկատվում նրանցից սերող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութեան ներկայացուցիչների պարագայում, որոնք, որպես կանոն, ճարտար հռետորներ են:

ERNA MANEA SHIRINIAN

ABOUT THE TITLE “GRACEFUL” OF CATHOLICOS  
NERSĒS IV KLAYETS’I

**Key words:** Nersēs Shnorhali, Graceful, Catholicos, honorary title, apostle Paul, mouth.

The article deals with the honorary title “Graceful” of the 68<sup>th</sup> Catholicos of Armenians, Nersēs IV Klayets’i. Such nicknames and honorifics provide interesting data, which is worthy of study. Like the few other famous authors who bore the same epithet: Sargis Shnorhali, Grigor III Pahlavuni, Ignatios of the *Black Mountain* etc. Nersēs the Graceful was one of the pupils of the renowned *didaskalos* Step’anos Manuk. The great pedagogue taught at the monasteries of the Black Mountain (mainly at the monastery called *Karmir vank’*), which at that time was a centre of learning with broad scope. Special attention is paid to new understanding of the honorary title “Graceful” (Շնորհալի): that is, its connotation relating to the mouth. After lengthy examination it is concluded that this title could be referring to a person, who is an excellent rhetorician, teacher and exegete. An attempt at connecting it with two other terms, which are also titles, “Chrysostom” (Ոսկեբերան), and “with golden belly” (Ոսկեփորիկ), is made here as well.

<sup>66</sup> Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 6:

ЭРНА МАНЕА ШИРИНЯН

**О ТИТУЛЕ «ШНОРАЛИ» КАТОЛИКОСА  
НЕРСЕСА IV КЛАЕЦИ**

**Ключевые слова:** Нерсес *Шнорали* («Благодатный»), католикос, почетный титул, апостол Павел, уста.

В статье обсуждается титул «Благодатный», в данном случае определяющий 68-го Католикоса армян – Нерсеса IV Клайеци. Титулы предоставляют весьма интересные данные, относящиеся к различным областям, и достойны изучения. *Нерсес Шнорали* был одним из учеников, носивших этот же титул (Саргис Шнорали, Григор III Пахлавуни, Игнатий Черногорец и др.) известного дидаскала Степаноса Манука, преподававшего в монастырях Черной горы (главным образом в монастыре *Кармир Ванк*), которые в то время были центром образования – своего рода международным университетом. Особое внимание уделено новому пониманию титула «Благодатный» (Շնորհալի): а именно, что одну из основных интерпретаций слова должно отнести к «устам», представляющим собой специальный богословский термин. Делается вывод, что этот титул может быть отнесен и к человеку, являющемуся прекрасным ритором, учителем и комментатором. Здесь же предпринята попытка связать его с двумя другими выражениями, также титулами «Златоуст» (Ոսկերեւան) и «Златочрев» (Ոսկեփորիկ).



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

#### ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

### ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

#### ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

### ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացություն միջնադարյան ընկալումները..... 61

### «ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

#### ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ  
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

#### ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»  
պատվանվան մասին..... 97

#### ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիր..... 116

#### ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական  
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

#### ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

#### ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ  
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

#### ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՍԵՅՆԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Մատենադարանի այլալեզու ֆոնդի շորս միավորի նկարագրություն (անգլ.)*..... 179

### ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով*..... 195

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը (համեմատական բնագիր)*..... 212

### ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

*Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և «Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը*..... 251

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

*Զափաթիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան, Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները, խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022*..... 260

### ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022*..... 270

## ԲԱՆԱՎԵՃ

### ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Դարձյալ հին Երևանի աշտարակի և երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ*..... 280

*Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ*..... 296

## CONTENTS

### HISTORY

#### **KAREN MATEVOSIAN**

The Teachers and Students of Gladzor University.....5

#### **HRANT OHANYAN**

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

### PHILOLOGY

#### **GAYANE TERZIAN**

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

### NATURAL SCIENCES

#### **KARINE MOSIKYAN**

Medieval Conceptions of Temperament.....61

### PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

#### **PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN**

Membership in the Armenian Church According to St. Nersēs  
Gracious’ Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

#### **ERNA MANEA SHIRINIAN**

About the Title “Graceful” of Catholicos  
Nersēs IV Klayets’i.....97

#### **VANO EGHIAZARYAN**

Nersēs Shnorhali as the Founder of the Genre  
of Didactic Poetry.....116

#### **LALIK KHACHATRYAN**

Formal Models of Figurative Comparisons  
in the Poem “Elegy on the Capture of Edessa”  
by Nersēs Shnorhali.....127

#### **LUSINE SAHAKYAN**

Nersēs Shnorhali And Komitas Vardapet.....139

**MHER NAVOYAN**

Some Characteristics of the Musical and Poetic Art  
of the Armenian Renaissance in the Heritage  
of St. Nerses Shnorhali ..... 156

**HASMIK IRITSYAN**

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali  
in Ms M3839 ..... 166

**BIBLIOGRAPHY****SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund ..... 179

**SATENIK GRIGORYAN**

On Two 18<sup>th</sup> C. Scroll Amulets ..... 195

**PUBLICATIONS****ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator ..... 212

**AREVIK ARABYAN**

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses  
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus” ..... 251

**BOOK REVIEWS****ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s  
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022 ..... 260

**ARMINE MELKONYAN**

*Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale*,  
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022 ..... 270

**DISCUSSION****ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower  
and Church Yerkueresni (St. Paul and Peter) ..... 280

## СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

**КАРЕН МАТЕВОСЯН**

Преподаватели и учащиеся Гладзорского университета ..... 5

**ГРАНТ ОГАНЯН**

Противостояние Давид-Даниэл и Лазаревы ..... 34

## ФИЛОЛОГИЯ

**ГАЯНЕ ТЕРЗЯН**

Опыт уточнения времени жизни Геворга Кага ..... 54

## ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

**КАРИНЕ МОСИКЯН**

Средневековые представления о темпераменте ..... 61

**ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ****“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”**

(21-23 июня, 2023 г.)

**ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН**

Принятие в лоно армянской церкви согласно посланию Св. Нерсеса Благодатного «Об обращении Сынов Солнца» ..... 83

**ЭРНА МАНЕА ШИРИНЯН**

О титуле «Шнорали» католикоса Нерсеса IV Клаеци ..... 97

**ВАНО ЕГИАЗАРЯН**

Нерсес Благодатный – основоположник жанра поучительных стихотворений ..... 116

**ЛАЛИК ХАЧАТРЯН**

Формальные модели образных сравнений в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали ..... 127

**ЛУСИНЕ СААКЯН**

Нерсес Шнорали и Комитас Архимандрит ..... 139

**МГЕР НАВОЯН**

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

**АСМИК ИРИЦЯН**

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

**БИБЛИОГРАФИЯ****ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

**САТЕНИК ГРИГОРЯН**

О двух старопечатных свитках-оберегах XVIII в. ....195

**ПУБЛИКАЦИИ****ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

**АРЕВИК АРАБЯН**

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

**РЕЦЕНЗИИ****АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

**АРМИНЕ МЕЛКОНЯН**

*Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale*, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

**ДИСКУССИЯ****АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

**ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 36**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 36**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 36**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի  
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի  
հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի թվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)